

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՅԱՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՇԱՀԵԿԱՆ ՎԱՌԵՐԱԳԻՐ ՄԸ

Ինչպէս յայտնի է, ծովային Կիլիկիոյ երբեմնի նշանաւոր բերդաքաղաքը՝ Այաս ԺԴ. և ԺԴ. դարերու ընթացքին կատաղի յորձակութիւններու ենթարկուեցաւ Եղիպտոսի սուլթաններու կողմէ, որոնք՝ առեւ-լափաւ նախանձէ մղուած՝ ամէն ձեւ թափեցին հայկական այս բանակի նաւահան-գիտը կործանելու համար: Ակնարկուած արշաւանքներէն ամենէն զարհուրեղի տեղի ունեցաւ 1322 ին՝ մեր Լեւոն Դ. մահուակ թագաւորին օրովը, երբ էլ Մէլիքէն Նաւարի յաղթական բանակները քարուքանդ ըրին հսկայ ծովաքաղաքը, կրակի տուին անոր անառիկ բերդերն ու շքեղ ապարանքները և սրէ անցուցին կամ գերեզմաններն ամբողջ բնակչութիւնը:

Հայկական տարեգրութեան էն տխուր էջը կազմող այս արբերգութեան համառոտ նկարագրութիւնը կը գտնեմ եղիպտական բանակի հրամանատարութեան կողմէ առեւտր Նաւարի սուլթանին մատուցուած պաշտօնական տեղեկագրի մը մէջ, որուն պատճէնը արձանագրած է Գալղաշանի իր Սորն հէ Աաշա (Կոյրին արշալոյսը) առեւտր գործին մէջ: Նկատի առնելով գրութեան պատմական արժէքը՝ ստորեւ թարգմանութիւնը կուտամ յանգաւոր արձակէ կաղժուած այս պաշտօնագրին, որ գաղափար մը պիտի առն միանգամայն միջնադարեան արարներէն մանուածապատ հիւստեալներն և աշխարհական բարդ պատկերներուն շուրջ:

ՏԵՆՂԵԿԱԳԻՐ

Գետին համբարելով կը տեղեկագրեմ, թէ սպասումի գիշերը իր արշալոյսը ծագեցուց և յոյսի խոստումները իրենց իրականացումը առաքելոյն յաջողութեան ձեռքով: Յաղթական բանակը լայնաբերան սուրը մերկացուց Այաս քաղաքին մէջ Բապի էփէն ամուռ ձրգ: օրը ևս նիզակ արձակեց կործնելու վրայ: Դրիւթէ ակըն-թարթ մը անցած էր, երբ կատաղի ճակա-

տաւորաի լեզուն բացաղանչեց, թէ նա-սիրհան բանակը յաղթանակած է արդէն: Յիշեալ ցերեկը անցուցինք պաշարման պատերազմի կրակը արժարժեղով աշտարակներու և պարիսպներու դէմ, ուսով կրակ մը՝ որ նաւահանգիստին շուրջը պատեց այնպէս, ինչպէս որ ապարանջանը կը շրջապատէ դաստակը:

Հազիւ թէ սրամարտի առաւօտը ծագած էր և լուսարձակած, երբ բերդի գագաթին վրայ բարձրացան նասիրական զօր-շակներ՝ ուրախութենէ կողածածան, որոնց լեզուները հրապարակաւ կը յայտարարէին. — Աշայան աղի ֆիլան, հայեալ աղին նա-ճան (Մն), դէպի երանտութիւն, ճն դէպի յաջողութիւն, երբ իսլամին փութը գէմ առ դէմ կուգայ անհաւատութեան անարգութեան հետ այս յաղթութեամբ և նը-ւաճումով:

Հայերու խուռնեամբ զանգուածը ցի-րուզան եղաւ սպանութեամբ, գերեզման-թեամբ և փախուստով: Կրակէ թաթեր խաղացին բերդին և անոր շրջապատներուն մէջ, կողանդամներ անշատուեցան պարիսպներէն և ճակատագրին վճռը արտու-սանեց կրակի լեզուն. — Ահա՛ կրակի մէջ են կրակի (գժութ) բնակիչներուն տունները:

Ապա պաշարոււմ փոխադրուեցաւ գէ-պի ծովաբերդ, որու մէջ հաւաքուած էր ոյմի և կարողութեան սուրէն հալածուող հայերու խումբը: Այս բերդը փառքի երկինքի մէջ ցցուած հարսնցու մըն է կուսակեաց, որուն ոչ մէկ հնադարեան արքայ նշանուած է անցեալին մէջ, հարսնցու մը հպարտ և ծանրամարմին՝ որ գոռոզացած է իր սիրահարին դէմ և գիտողին աչքը դէպի վար խոհարհեցուցած: Այս բերդը, զոր հոյն ու քարը պատսպարած են, մթնոլորտի բարձունքին մէջ սպանով ապրող թռչունի մը կը նմանի, որու բռնիին գրեթէ չհասնիլը գիտողը: Երկաթեայ օդակնե-րով շղթայուած՝ ան ձեռնակապերով դէպի պատուհասի օրը առաջնորդուող ըմբոստին պէս կապկպուած է:

Քարածիգ մեքենան իր գետարծիւր արձակեց վրան, իր մագիլն ու ժանիքը խրեց մէջը, երեւան հանց անոր ժանիքաւոր ծայրամասներուն ճերմակ ատամները և նետներէն ամբարով քարակից բաժանկեր խմուց անոր: Բերդը երեւալ գինովու-

թեան սաստկութիւնէն, փականքուած արկըղներ դուրս նետեց իր աշտարակներէն և կապուած մասեր անջատեց իր պարիսպներէն: Անոր սիւները ստատեցան և հիմնաքարը տեղէն անհետացաւ: Հարուածող ձեռքերը բարձրացան, իսկ պաշտպանող ձեռքերը կապկպուեցան: Անոր հիւանդութիւնը սաստկացաւ պաշարման կրակի տապէն և ալ անկար դարձաւ քարերուն դիմադրելու: Կոպ բացող անձ մը չմնաց իր պարիսպին վրայ:

Մեքինան ամէն կողմէ յարձակում գործեց վրան, մինչեւ որ ան մաշած տիկ մը դարձաւ: Ապա ամբողջ 7 դիշեր եւ 8 դաժան օր անընդհատ քարկոծեց գայն կատաղութեան երկինքէն: Ասոր վրայ բերդը փութաց հնազանդութիւն յայտնելու և հպատակեցաւ: Մեքինան կրկնեց իր խռնարհումը դէպի բերդ, որ երկպառքութիւն ըրաւ: Ապա յաղթական բանակները սրարշաւ երթվարներու տեղ ծովային անդունդներու վրայ հեծան և հոգի տրամադրեցին մեծն և ամենակարողն Աստուծոյ ճամբուն:

Այն ատեն բերդապահները փութացին

Գանիրե

փախուստի միջոցներուն կառչելու, որովհետեւ նաւահանգիստի այս բերդին քանդումը իրենց ամբարդուակի քանդումին նախափորձն էր: Անոնք իրենց ձեռքերով բարկութեան կրակը ձգեցին բերդի կեդրոնին մէջ և գիշերանց հեռացան՝ փախուստի քղանցքը քաշքշիւղով: Մամէտականները ստացան բերդը, իսկ անհաւատները մեծապէս հուռաչեցին անոր վրայ: Ան քար առ քար քանդուեցաւ, գետնի երեսը ողլուգութեամբ անոր ճակատին հետ եւ հետքով ու էութեամբ ոչնչացաւ: Ի՞նչ զարմանալի և տարօրինակ է այս յաղթութիւնը: Որքան քաղցր եւ հաճելի է անոր յիշատակը բերաններու մէջ, որքան հեշտաւէտ եւ ուրախադիմ է անոր զրոյցը ականջներու համար եւ որքան երջանիկ ու ազնիւ է նասիրեան բանակը:

Տեղեկագիրը կը վերջանայ չափածոյ թերթուածով մը, ուր չափազանցուած գովեստներ կ'աղղուին նասիրի բանակին՝ Այասի վրայ տարուած յաղթութեան առթիւ: Զանց կ'ընեմ թարգմանութիւնը այս ստանաւորին, որ արդէն զուրկ է պատմական արժէքէ:

ԳԻՈՐԳ ՄՐՍՐԼԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Հ Ի Ե Շ Տ Ա Կ Զ ՈՒ Ա Ր Թ ՈՒ Ն

«Հրեցական զուարթում» կը բարձրանայ անվերջով — Գիւեքուման գիրկն, աստղերուն ցալ, մէջ բակին, Ուր ծառ մ'նսկայ աղօթածե հասակով ձիւղ փոկն իրենց կառծես հրաւր մ'է լըռին:

Հոգեպարար երգն իրիկումն այս ջրղոց
Կ'երգեն ամենքն, ու կ'աղօթեն ի խորոց,
Հիմա, անոնք, աղաչաւոր ու աղուոր

Մինչ կ'ունկընդդեմ են անբարբառ, գլխիկոր:

Էր երբեմն ես ալ կ'երգէի այս ծամուն,
Այս երգը նոյն ու նոյն աղօթքն այս սիրուն
Մանուկներու հետ երբ մանուկ էի դեռ:

Հիմա նորէն կ'ուզեմ մանուկ լինիլ, Տէ՛ր,
Հոգով, սրտով կ'ուզեմ մանուկ լինիլ ես,
Եւ աղօթել քեզ ու երգել մանկաման պէս:

Ն. ԹԱՄԱՄԵԱՆ